

ՀՏԴ 159.9:373Հոգեբանություն*Վահան ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մանկավարժության ամբիոն, մ. գ. թ.**E-mail: vmelqsetyan0077@mail.ru*

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՊԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Վերջին ժամանակներում ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի ուսումնասիրությունը նոր հնչեղություն է ձեռք բերել: Կյանքի ընթացքում մարդու ինքնավերաբերմունքը և դրա կարևորագույն դրսևորումներից մեկը՝ ինքնագնահատականը, անընդհատ ենթարկվում են փոփոխությունների՝ աճում կամ նվազում: Ինքնավերաբերմունքի բնութագրման համար հաճախ կիրառվում են դրա ձևավորման մեջ դեր ունեցող բաղադրիչների գիտական անվանումները՝ ինքնագնահատական, ինքնահարգանք, ինքնաընդունում և այլն: Երբ անձը գնահատում է ինքն իրեն՝ համեմատելով ուրիշների հետ, այդ դեպքում կարելի է ասել, որ նրա ինքնավերաբերմունքը այլ մարդկանց վերաբերմունքն է: Երբ անձը ինքնակամ է հրաժարվում իր բոլոր սոցիալական դիմականքից, որոնք հանդիսացել են նրա ողջ կյանքում իրական ինքնավերաբերմունքից փախչելու գործառույթ, միայն այս դեպքում է, որ անձը կարող է ադեկվատ գնահատել ինքն իրեն: Բարձր և ցածր ինքնագնահատականներն, ըստ էության, միևնույն հոգեկան երևույթի՝ ինքնավերաբերմունքի երկու բևեռներն են: Ինքնավերաբերմունքի բաղադրիչներից ամենաբարձրը ինքնակառավարումն է, իսկ ամենացածրը՝ ինքնամեղադրումը: Անհատի՝ ինքն իր անձի հանդեպ վերաբերմունքի էությունը բացահայտող և ամենաշատը կիրառվող մոտեցումներն են՝ ընդհանուր կամ գլոբալ ինքնագնահատականը, ինքնահարգանքը, ինքնավերաբերմունքը և հուզական-արժեքային վերաբերմունքը: Ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի միջև առկա են բազմաթիվ փոխադասմանավորվածություններ, որոնք ազդում են միջին դպրոցական տարիքի երեխայի անհատական զարգացման վրա:

Բանալի բառեր՝ ինքնագնահատական, ինքնավերաբերմունք, հումանիստական տեսություն, հոգեվերլուծական տեսություն, սոցիոլ, անհատ, մետավերլուծություն, ինքնակառավարում:

В. Меликсетян

СВЯЗЬ МЕЖДУ САМООЦЕНКОЙ И САМООТНОШЕНИЕМ В СРЕДНЕМ ШКОЛЬНОМ ВОЗРАСТЕ

В последнее время исследования самоотношения и самооценки получили новое звучание. В течение жизни самоотношение человека и его важнейшее проявление – самооценка – постоянно подвергаются изменениям: возрастают или снижаются. Для характеристики самоотношения часто употребляются термины компонентов, применяемые при их формировании: самооценка, самоуважение, самопринятие и т.д.

Если индивид оценивает самого себя в сравнении с другими, то в этом случае можно сказать, что его самоотношение – это отношение других людей. Когда индивид добровольно отказывается от всех своих социальных масок, которые на всем протяжении его жизни позволяли скрыться от реального самоотношения, то только в этом случае индивид может адекватно оценить самого себя. Высокая и низкая самооценка, по существу, являются двумя полюсами одного и того же психического состояния – самоотношения. Одним из самых высоких компонентов самоотношения является самоуправление, а самым низким – самоосуждение. Среди проявлений, которые раскрывают сущность отношения индивида к самому себе и применяются чаще других, можно назвать: общую или глобальную самооценку, самоуважение, самоотношение и эмоционально-аксиологическое отношение. Между самоотношением и самооценкой присутствует взаимобусловленность, которые влияют на индивидуальное развитие детей среднего школьного возраста.

Ключевые слова: самооценка, самоотношение, гуманистическая теория, психоаналитическая теория, социум, индивид, метаанализ, самоуправление.

V.Meliksetyan

THE RELATIONSHIP BETWEEN SELF-ATTITUDE AND SELF-ESTEEM IN MIDDLE SCHOOL AGE

Recently, the study of self-attitude and self-esteem has received new attention. During life, a person's self-attitude and one of its most important manifestations - self-esteem, are constantly changing by increasing or decreasing. Self-attitude is often characterized through the terms of components involved in its development such as self-esteem, self-respect, self-acceptance, and so on. While a person evaluates himself by comparing himself to others, it can be stated that his self-attitude reflects the attitude of other people. Only in case when a person voluntarily gives up all his social masks, which have had the function of escaping from real self-attitude throughout his life, he can adequately

assess himself. High and low self-esteem are, in fact, two poles of the same mental phenomenon, self-attitude. The highest of the components of self-attitude is self-government, and the lowest is self-blame. The most widely used approaches to revealing the essence of an individual's attitude towards themselves are general or global self-esteem, self-respect, self-attitude, and emotional-value attitude. There are many reciprocal influences between self-attitude and self-esteem that affect a middle-school aged child's individual development.

Key words: self-esteem, self-attitude, humanistic theory, psychoanalytic theory, society, individual, meta-analysis, self-government

Ներածություն

Վերջին ժամանակներում ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի ուսումնասիրությունը նոր հնչեղություն է ձեռք բերել: Ներկայումս ամբողջ աշխարհում տեղի են ունենում ինտենսիվ սոցիալ-տնտեսական փոփոխություններ, որոնցում իրենց անմիջական դերն ու մասնակցությունն է ունենում հանրությունը: Այդ ամենի հանդեպ հանրության դիմադրողականության ցուցիչ է դիտարկվում նրա հոգեկան կայունության աստիճանն ու սոցիալ-հոգեբանական բարեկեցությունը: Վերջիններիս կարևորագույն դրսևորումներից են ինքնավերաբերմունքը և ինքնագնահատականը: Ինքնավերաբերմունքը շատ կարևոր երևույթ է, քանի որ ազդում է անհատի մտածելակերպի, զգացողությունների, ինչպես նաև նրա գործողությունների վրա առօրյա կյանքում:

Առաջին տերմինը առավել լայն կիրառում է ունեցել արևմտյան հոգեբանության մեջ՝ XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դար, որից հետո փոխարինվել է *ինքնագնահատական* եզրույթով: Խորհրդային տարիներին անհատի՝ ինքն իր անձի հանդեպ վերաբերմունքի ֆենոմենի հիմնական հետազոտությունների և ուսումնասիրությունների հեղինակները եղել են Ա. Ն. Լեոնտևը, Ս. Լ. Ռուբինշտեյնը, Ա. Գ. Սպիրկինը, Ի. Ս. Կոնը և այլք: Իսկ *ինքնավերաբերմունք* եզրույթը ներդրվել է վրացի հոգեբան Ն. Ի. Սարջվելաձեի կողմից: Այժմ նախկին խորհրդային հոգեբանության *ինքնավերաբերմունք* տերմինին փոխարինել է *հուզական-արժեքային վերաբերմունք եզրույթը*: Հոգեբանության մեջ ամենահին սահմանումը գլոբալ ինքնագնահատական եզրույթն է (self esteem): *Ինքնագնահատական* բառը ունի լատինական ծագում՝ “aestimare”, որը նշանակում է *գնահատում*:

Ինքնավերաբերմունքը բազմագործոնային, բազմաբաղադրյալ համակարգ է, որը սկսում է ձևավորվել անհատի ծնվելու օրվանից ու անընդմեջ փոփոխությունների է ենթարկվում տարիների ընթացքում: *Ինքնավերաբերմունք* հասկացությունը ուսումնասիրվել է դեռևս 19-րդ դարից սկսած: Հետազոտողները

¹ *Кольшико А.М., Психология Самоотношения: Учеб. пособие Гродно: ГрГУ, 2004, 102 с.*

սկսեցին ուսումնասիրություններ անցկացնել, որոնց նպատակն էր պարզաբանել անհատի վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ:

Հոգեբանության մեջ ինքնավերաբերմունքը դիտարկվում է որպես սեփական «Ես»-ի հանդեպ յուրօրինակ զգացողություն, որպես *հայեցակարգային պատրանք*։ Վրացի Ն. Ի. Սարջվելաձեն առաջինն էր, ով մարդու վերաբերմունքն ինքն իր նկատմամբ անվանեց *ինքնավերաբերմունք*։ Նա, ով փորձեց անհատի վերաբերմունքն ինքն իր նկատմամբ առանձնացնել ինքնագիտակցությունից: Սակայն չի նշանակում, որ *ինքնավերաբերմունք* հասկացությունը ուսումնասիրված չէր հոգեբանական տարբեր ուղղություններում: Այն դիտարկել են «Ես»-ի, ինքնագիտակցության, ինքնագնահատականի տեսանկյունից:

Տարբեր տեսությունների միջոցով սկսեցին մեկնաբանվել *ինքնավերաբերմունք* հասկացությունը, օրինակ, հումանիստական և հոգեվերլուծական տեսությունները *ինքնավերաբերմունք* հասկացությունը նույնացնում էին *ինքնագիտակցության* հետ: Ինքնավերաբերմունքը տասնամյակներ շարունակ ուսումնասիրվել է տարբեր հետազոտողների կողմից, սակայն մինչև օրս չկա միասնական մոտեցում. հոգեբանական բառարաններում ևս *ինքնավերաբերմունք* հասկացությունը հաճախ նույնացվում է ինքնագիտակցության հետ¹:

Ինքնավերաբերմունքի փորձարարական հետազոտությունները բացահայտում են տարիքային որոշակի օրինաչափություններ: Եթե դեռահասության և պատանեկան տարիներին անհատին հաճախ է անհանգստացնում այն, թե ինչ են իր մասին մտածում մարդիկ, ապա ուշ հասունության շրջանում, նրան ավելի շատ հետաքրքրում է, թե ինքն ինչ է մտածում իր մասին:

Պատանեկան տարիքում ինքնավերաբերմունքը պայմանավորված է անձի նկատմամբ սոցիալական միջավայրի ազդեցությամբ, իսկ ուշ հասունության շրջանում այն պայմանավորված է մարդու վերաբերմունքով սեփական անձի նկատմամբ: Ինքնավերաբերմունքի անկախացումը շրջապատից խորանում է տարիքի հետ միասին: Տարիների ընթացքում անձը կարողանում է գնահատել ինքն իրեն, որը դառնում է կյանքի իմաստի ձեռքբերման յուրօրինակ փորձ: Երբ անձը գնահատում է ինքն իրեն՝ համեմատելով ուրիշների հետ, ապա այդ դեպքում կարելի է ասել, որ նրա ինքնավերաբերմունքը նաև այլ մարդկանց վերաբերմունքն է: Երբ անձը ինքնակամ է հրաժարվում իր բոլոր սոցիալական դիմակներից, որոնք դարձել են ողջ կյանքում նրա իրական ինքնավերաբերմունքից փախչելու գործառույթը, ապա միայն այդ դեպքում է, որ անձը կարող է արդարացիորեն գնահատել ինքն իրեն:

Ինքնավերաբերմունքի զարգացումը կարելի է ներկայացնել հետևյալ հարթություններում՝

ա. *սոցիալական* հարթություն, որը ենթադրում է ինքնավերաբերմունքի

¹ Зинченко В.П., Психологический словарь, М., Педагогика-Пресс, 1997, 564 с.

ձևավորումը շրջապատի կողմից,

բ. *Էքզիստենցիալ* (գոյաբանական) հարթություն, որը ենթադրում է, թե այս դեպքում մարդը մնում է միայնակ իր էության հետ և փորձում է գիտակցել սեփական կյանքի իմաստը:

Ինքնավերաբերմունքը հոգեբանության ոլորտում հետազոտությունների օբյեկտ է դիտվել դեռևս Ու. Ջեյմսի ժամանակաշրջանից և մինչ օրս էլ շարունակում է մնալ ուսումնասիրությունների կիզակետում¹: Ինքնավերաբերմունքի երևույթը հոգեբանական հետազոտությունների ուսումնասիրման օբյեկտ է եղել բազմաթիվ խորհրդային և արտասահմանյան մասնագետների համար, այդ թվում՝ Ռ. Բյորնսի, Ու. Ջեյմսի, Կ. Ռոջերսի, Ս.Ռ. Պանտելենի, Վ.Վ. Ստոլինի և այլոց: Ըստ Տ.Ն. Կոչետկովի՝ ինքնավերաբերմունքի բազմաթիվ հետազոտությունները փաստում են, որ տվյալ երևույթը, որպես խնդիր, դեռևս արդիական է մի շարք պատճառներով².

ա. ինքնավերաբերմունքի սահմանման, կառուցվածքաբանության, հայեցակարգերի միատարրության բացակայություն,

բ. ինքնավերաբերմունքի կոնֆլիկտային բնույթի ոչ բավարար լուսաբանվածություն,

գ. սեփական անձի հանդեպ դրական ինքնավերաբերմունքի ձևավորման, ինչպես նաև ինքնավերաբերմունքի՝ որոշակի մակարդակում կայուն պահելու պայմանների թերի ուսումնասիրություն:

Հատկանշական է, որ անգամ տեսական մակարդակում միջին դպրոցական տարիքի ինքնավերաբերմունքի բոլոր ասպեկտների վերլուծությունը բավականին բարդ է իրականացնելը: Մինչ օրս ինքնավերաբերմունքի հստակ և միանշանակ սահմանում գոյություն չունի: Ինքնավերաբերմունքի բնութագրման առիթով տարբեր հեղինակներ կիրառել և կիրառում են ինքնավերաբերմունքի ձևավորման մեջ դեր ունեցող բաղադրիչների անվանումները՝ *ինքնագնահատական, ինքնահարգանք, ինքնարժեք* և այլն³:

Միջին դպրոցական տարիքի երեխայի, անհատի՝ ինքն իր անձի հանդեպ վերաբերմունքի էությունը բացահայտող ամենաշատ կիրառվող մոտեցումներն են՝ ընդհանուր կամ գլոբալ ինքնագնահատականը, ինքնահարգանքը, ինքնավերաբերմունքը և հուզական- արժեքային վերաբերմունքն իր հանդեպ:

Ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի փոխկապվածությունը

Հոգեբանության մեջ հաճախ *ինքնավերաբերմունք* հասկացությունը նույնացվում է *ինքնագնահատական* հասկացության հետ: Հոգեբանական գրականության մեջ ինքնագնահատականի կամ ինքնավերաբերմունքի

¹ *Кольшико А.М., Психология Самоотношения: Учеб. пособие Гродно: ГрГУ, 2004, 102 с.*

² *Кон И.С., В поисках себя. Личность и ее самосознание, М.: Политиздат, 1984, 335 с.*

³ <https://www.dissercat.com/content/psikhologicheskie-factoryformirovaniya-samootnosheniya-lichnosti>

վերաբերյալ գոյություն ունեն մի շարք սահմանումներ, որոնք հիմնված են աշխարհի և սեփական անձի հանդեպ հուզական վերաբերմունքի գործոնի հիման վրա, որն ըստ էության միևնույն բանն է: Դրանցից են հպարտությունը, ամորը, սեփական արժանապատվության զգացումը և այլն: Բնարկե, տվյալ հուզական հարթությունը խիստ գիտական չէ, սակայն տվյալ հուզական մոտեցումն առօրյա գիտակցության տեսանկյունից հաճախ որոշիչ է հանդիսանում:

Ինքնավերաբերմունքը՝ որպես ինքնագնահատականի հոմանիշ, սովորաբար սահմանվում է որպես կայուն հոգեկան կառուցվածք, որն ունի արժեքային բնույթի բովանդակություն, սակայն մենք համարում ենք, որ տվյալ բնութագրումը չի կարող ընդունված լինել անվերապահորեն: Բարձր և ցածր ինքնագնահատականները, ըստ էության, միևնույն հոգեկան երևույթի՝ ինքնավերաբերմունքի երկու բևեռներն են, ըստ որոնց և տարբերակում ենք այս երկու հասկացությունները: Ճիշտ այդպես, չի կարելի միակողմանիորեն պնդել, թե միջին դպրոցական տարիքի սովորողի ցածր ինքնագնահատականը թերարժեքության զգացողության արդյունք է միշտ: Մենք այն բխեցնում ենք հատկապես ինքնավերաբերմունքի որակի տարիքային բնութագրության դիրքերից, այսինքն, ամեն մի կոնկրետ անձի յուրաքանչյուր տարիքային փուլ իր էական ուղղումն է մտցնում սեփական ինքնավերաբերմունքի մեջ:

Հոգեբանության մեջ կարևորվում է *գլոբալ ինքնագնահատական* տերմինը¹: Այն բնութագրվում է որպես ինքնաճանաչման և հուզական ինքնավերաբերմունքի ամբողջություն: Ինքնավերաբերմունքն առավել լայն հասկացություն է, քան գլոբալ ինքնագնահատականը, քանի որ ինքնավերաբերմունքի բաղադրիչները չեն ներկայացնում միայն անձի գնահատականը, այլ նաև այն տեսակետը, ըստ որի՝ ընդհանուր ինքնագնահատականը պայմանավորվում է նրա ինքնավերաբերմունքով, կամ սեփական անձի հանդեպ հուզական վերաբերմունքով: Ի.Ս. Կոնը, վերլուծելով ինքնագիտակցության հոգեբանական առանձնահատկությունները², անդրադառնում է ընդհանուր ինքնագնահատականի ձևավորման հոգեբանական հիմքում տեղի ունեցող այնպիսի գործընթացների, ինչպիսիք են՝ սուբյեկտի կողմից արտաքին սոցիալական գնահատականների համեմատությունը՝ որպես լավ-վատ, դրական-բացասական, և դրանց յուրացումն ու ինքավերագրումը:

Միջին դպրոցական տարիքի սովորողի ինքնավերաբերմունքը, սեփական անձի նկատմամբ *դեմ* կամ *կողմ* զգացմունքները կայունության այնպիսի մակարդակ ունեն, որը թույլ է տալիս այդ զգացմունքն ընկալելու որպես անձնային որակ, բավականին ռիզիկո, փոփոխությունների անընդունակ: Այսպիսով, Ի. Ի. Չեսնոկովան ելնում է հատկապես նման դիրքորոշումներից³:

¹ *Шапиро Д., Невротические стили, М., Институт общегуманитарных исследований, 1998, 346 с.*

² *Кон И.С., указ.соч., 335 с.*

³ *Чеснокова И.И., Проблема самосознания и психологии, М., Наука, 1977, стр. 79.*

Մենք համարում ենք, որ հենց ինքնավերաբերմունքը արժեքային, հոգեկան բաղադրիչներով լրացվելու կարիք ունի, այսինքն, արդեն իսկ ձևավորված ընդունելի ինքնավերաբերմունքի համար անհրաժեշտ են այլ կարգի արդիականացված արժեքներ, ինչպիսիք են՝ սոցիալական կարգավիճակը, բանականության մակարդակը, միջանձնային հանդուրժողականությունը և այլն:

Ս. Ռ. Պանտելենը ինքնագնահատականը համարում է ինքնավերաբերմունքի ենթահամակարգերից մեկը, որը, համաձայն հեղինակի հայեցակարգի, իր մեջ ընդգրկում է ինքնահարգանքը, ինքնահամեմատումը, ինքնահամակրանքը, սեփական անձի նկատմամբ հուզական-գնահատող վերաբերմունքը: Նա, հիմնվելով Ա. Բոդալսի և Վ. Ստոլինի «Ես» հայեցակարգի ըմբռնման վրա, որոնցում ինքնավերաբերմունքը ներկայացվում է որպես անձի *սպրում*, համեմատաբար կայուն զգացմունք, կարծում է, որ ինքնավերաբերմունքը ներթափանցում է անձի ինքնաընկալման և «Ես» կերպարի մեջ¹: Այսպիսով, տեսական նյութի վերլուծությունից կարող ենք ենթադրել, որ առկա է փոխապայմանավորվածություն ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի միջև: Ս. Ռ. Պանտելենը, վերլուծելով ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի կապը Ա.Ն. Լեոնտևի և նրա աշակերտ Վ.Վ. Ստոլինի աշխատությունների հայեցակարգերում, հանգել է հետևյալ եզրակացության՝

ա. ինքնավերաբերմունքը անձի ինքնագարգացման և ինքնաձևավորման մի ամբողջություն է, ուստի՝ դրա կառուցվածքի ու կազմության բացահայտումը հնարավոր է իրականացնել միայն սուբյեկտի՝ իրական կյանքում ունեցած հարաբերություններում, որոնց հիմքում առկա են որոշակի դրդապատճառներ՝ կապված սուբյեկտի՝ որպես անհատի, ինքնիրացման հետ:

բ. ըստ Ա.Ն. Լեոնտևի՝ դրդապատճառները, որոնք ստեղծում են գործողություն, ունեն, փաստորեն, որոշակի անհատական իմաստ և կոչվում են *իմաստաբանական*: Մյուս դրդապատճառները, որոնք զուրկ են իմաստաբանությունից, պայմանականորեն կոչվում են *դրդապատճառ խթանողներ*: Վերջիններս գործում են զուտ որպես խթանիչ գործոններ, որոնք, ընդ որում, կարող են լինել թե՛ դրական, թե՛ բացասական, երբեմն էլ՝ սուր էմոցիոնալ աֆեկտիվ:

գ. ինքնագնահատականը առաջին հերթին կապված է զգայությունների հետ, որոնք ազդարարում են, թե սուբյեկտի այս կամ այն առանձնահատկությունները ինչպես են նպաստում հաջողությանը կամ դրդապատճառ-խթանող շարժառիթային գործողությունների հաջող իրացմանը: Սեփական անձի հանդեպ էմոցիոնալ-արժեքային վերաբերմունքով էլ որոշվում են իմաստաբանական դրդապատճառները: Այսպիսով, ինքնավերաբերմունքը, որպես «Ես»-ի գաղափարի դրսևորում, ընդգրկում է երկու ենթահամակարգ՝

¹ Столин В.В., Самосознание личности. М., 1983, с. 165–166.

ինքնագնահատականի ենթահամակարգ և էմոցիոնալ արժեքային հարաբերությունների ենթահամակարգ: Ինքնագնահատականի ենթահամակարգը, որի հիմքում ընկած են *դրդապատճառ-խթանող* շարժառիթները, առավել հակված են հոգեբանական պաշտպանիչ գործընթացներին¹:

Միջին դպրոցական տարիքի ճգնաժամի մեջ ինքնավերաբերմունքի դրսևորումները

Կյանքի ընթացքում մարդու ինքնավերաբերմունքը և դրա կարևորագույն դրսևորումներից մեկը՝ ինքնագնահատականը, անընդհատ ենթարկվում է փոփոխությունների. *աճում է* կամ *նվազում*: Այդ ֆլուկտուացիաները ընդհանուր առմամբ արտացոլում են անհատի՝ շրջակա միջավայրի հանդեպ ունեցած փոփոխությունները, ինչպես նաև տարիքային փոփոխությունները:

Ինքնավերաբերմունքի միջուկը մենք հակված ենք տեսնելու անհատի՝ ինքն իր հանդեպ ունեցած հուզական վերաբերմունքով:

Անձը սկսում է գնահատել ինքն իրեն այնպես, ինչպես գնահատում են իրեն ուրիշները, և որքան շատ է անհամապատասխանությունը այն բանի, թե ինչպես է ինքն իրեն գնահատում անձը, այսինքն, ինչպիսին է նրա ինքնարժևորման զգացողությունը, և այն, թե ինչպես են ուրիշները գնահատում իրեն, այնքան ավելի հավանական է ներանձնային կոնֆլիկտի ձևավորումը, որը մեր կողմից անվանվում է *ներանձնային* միայն պայմանականորեն, քանի որ վերջինս ձևավորվում է անմիջապես սոցիալական միջավայրի ազդեցությամբ:

Սկզբունքորեն *ընդհանուր ինքնագնահատական* հասկացության բոլոր մոտեցումները արտացոլում են մեկ ընդհանուր առանձնահատկություն, այն է՝ յուրաքանչյուր սահմանում պարունակում է որոշակի դիմակայող կամ հաշտեցնող կողմ: Ի՞նչ նկատի ունենք: Միջին դպրոցական տարիքի ինքնագնահատականը հաճախ մեկնաբանվում է որպես հուզական վերաբերմունք *գումարում* կամ *հանում* նշանով, այսինքն, ինքնավերաբերմունքի տիրույթում առանձնանում է սեփական անձի ընդունումը կամ նրա հանդեպ վերաբերմունքը՝ *դեմ* կամ *կողմ* լինելը: Այսօրինակ հուզական վերաբերմունքը բնութագրվում է զարմանալի կայունությամբ և չտարբերվողականությամբ: Սակայն հակված ենք մտածելու, որ հուզական ինքնակողմնորոշման մեջ տվյալ կայունությունը կրում է հարաբերական բնույթ, այսինքն, եթե մենք այդ վերաբերմունքի մեջ ներառում ենք տարիքային շեմ, ապա ստանում ենք ճկունության բավականին զգալի մակարդակ:

¹ https://psyera.ru/samootnoshenie-i-samoocenka-lichnosti_8955.htm.

Ութսունվեց հրատարակված գիտական հոդվածներից ստացված մետափերությունները¹ վկայում է՝

ա. *վաղ մանկական* հասակում երեխաները ունենում են հարաբերականորեն բարձր ինքնագնահատական, որը մանկության տարիների ընթացքում հետզհետե սկսում է նվազել: Գիտնականները երեխաների բարձր ինքնագնահատականը կապում են նրա հետ, որ վերջիններս կյանքը ոչ ռացիոնալ դրական են ընկալում: Տարիների ընթացքում նրանք սկսում են բախվել առավել բացասական իրադարձությունների ու երևույթների, ինչի արդյունքում ինքնագնահատականը աստիճանաբար սկսում է անկում ապրել:

բ. *պատանեկության* ժամանակ ինքնագնահատականը շարունակում է անկում ապրել, որը հատկապես կապում են այդ տարիքում մարմնակազմվածքի, արտաքինի և պոբերտատ տարիքին բնորոշ այլ փոփոխությունների հետ:

գ. *մեծահասակների* շրջանում արդեն ինքնագնահատականը սկսում է աճել, որն իր գագաթնակետին է հասնում հատկապես վաթսուն տարեկանի սահմանում:

Այդ աստիճանական աճը կապում են մեծահասակների շրջանում տեղի ունեցող ինքնադրսևորման, աշխատանքում կայացման, որոշակի դիրքի ձեռքբերման, ինքնիրացման գործընթացների հետ: Այս ամենը, ընդհանուր առումով, ազդում է անհատի ինքնավերաբերմունքի, և մասնավորապես, ինքնագնահատականի վրա:

դ. *տարեցների* մոտ կրկին սկսում է անկում ապրել ինքնավերաբերմունքը: Որոշ հետազոտություններ վկայում են, որ անկումը հատկապես դիտարկվում է յոթանասուն տարեկանների շրջանում: Այս անկումը գիտնականները կապում են թոշակի անցման, առողջական տարբեր խնդիրների, ամուսնու կամ կնոջ կորստի և այլ պատճառների հետ:

Գիտնականները հետազոտել են մասնակիցների ինքնավերաբերմունքը՝ հարցնելով նրանց համաձայնության աստիճանը տրված հարցերին.

ա. «*դրական եմ վերաբերվում ինքս իմ հանդեպ*», որը ենթադրում է բարձր աստիճանի ինքնավերաբերմունք,

բ. «*Ժամանակ առ ժամանակ մտածում եմ, որ այդքան էլ լավը չեմ*»,

գ. «*ընդհանուր առմամբ հակված եմ մտածելու, որ անհաջողակ եմ*»: Վերջին երկուսը վկայում են ցածր աստիճանի ինքնավերաբերմունքի մասին:

Կրթությունը, եկամուտը, առողջությունն ու աշխատանքը որոշակի ազդեցություն ունեն ինքնավերաբերմունքի վրա, հատկապես, տարիքին զուգընթաց այդ գործոնների դերը ինքնավերաբերմունքի աստիճանի ձևավորման մեջ ավելի մեծ դեր են սկսում կատարել: Հետազոտությունները ցույց են տալիս,

¹ http://local.psy.miami.edu/faculty/dmessenger/c_c/rsrscs/rdqs/emot/robins_trz.selfesteemdevl_curid8/2005.pdf.

որ չնայած այն հանգամանքին, թե ընտանեկան հարաբերությունները դրական ազդեցություն ունեն ինքնավերաբերմունքի բարձր մակարդակի վրա, այնուամենայնիվ, տարիքին զուգընթաց, ինքնավերաբերմունքը սկսում է անկում ապրել թե՛ երջանիկ ընտանեկան կյանք ունեցող, թե՛ միայնակ ու դժբախտ ընտանիքներում: Միջին դպրոցական տարիքը կյանքում համարվում է հարաբերորեն կայուն շրջան՝ աշխատանքի, ընտանեկան հարաբերությունների և, առհասարակ, հասարակության մեջ կայուն լինելու հանգամանքը նկատի ունենալով: Ուստի, դրանից հետո, ավելի բարձր տարիքում տեղի ունեցող բեկումնային փոփոխությունները, ինչպիսիք են՝ թոշակի անցումը, եկամտի սղությունը և այլն, սկսում են ազդել ինքնավերաբերմունքի մակարդակի վրա՝ բերելով դրա նվազմանը¹:

Եզրակացություն

Վերլուծության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների՝

ա. ինքնավերաբերմունքի ամենաբարձր բաղադրիչը ինքնակառավարումն է, ամենացածրը՝ ինքնամեղադրումը,

բ. ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի միջև գոյություն ունի փոխադարձ կապ,

գ. ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի ցածր ցուցանիշների դրսևորումները միջին դպրոցական տարիքում վկայում են անձի կյանքում ճգնաժամի առկայության մասին, որն արտահայտվում է այնպիսի չափանիշների միջոցով, որոնք առկա են բացասական հույզերի գերակայության դեպքում. ռեֆլեքսիայի ցածր ցուցանիշներ, սեփական վարքը մեկ այլ տեսանկյունից դիտարկելու անկարողություն:

Գրականություն

1. **Зинченко В.П.**, Психологический словарь, М., Педагогика-Пресс, 1997, 564 с.
2. **Колышко А.М.**, Психология Самоотношения: Учеб. пособие Гродно: ГрГУ, 2004, 102 с.
3. **Кон И.С.**, В поисках себя. Личность и ее самосознание, М.: Политиздат, 1984, 335 с.
4. **Столин В.В.**, Самосознание личности. М., 1983, с. 165–166.
5. **Чеснокова И.И.**, Проблема самосознания и психологии, М., Наука, 1977, стр. 79.

¹ Article: "Self-Esteem Development From Young Adulthood to Old Age: A Cohort-Sequential Longitudinal Study," **Ulrich Orth**, PhD, University of Basel, **Kali H. Trzesniewski**, PhD, University of Western Ontario and **Richard W. Robins**, PhD, University of California, Davis; *Journal of Personality and Social Psychology*, Vol. 98.

6. Шапиро Д., Невротические стили, М., Институт общегуманитарных исследований, 1998. 346 с.
7. <https://www.dissercat.com/content/psikhologicheskie-factoryformirovaniya-samootnosheniya-lichnosti>
8. https://psyera.ru/samootnoshenie-i-samoocenka-lichnosti_8955.htm
9. http://local.psy.miami.edu/faculty/dmessenger/c_c/rsrscs/rdgs/emot/robins_trz.selfesteemd_evel_curidr2005.pdf.
10. Article: "Self-Esteem Development From Young Adulthood to Old Age: A Cohort- Sequential Longitudinal Study," **Ulrich Orth**, PhD, University of Basel, **Kali H. Trzesniewski**, PhD, University of Western Ontario and **Richard W. Robins**, PhD, University of California, Davis; Journal of Personality and Social Psychology, Vol. 98, No.

Հոդվածը տպագրության է երաշխավորել իմփագրական
խորհրդի անդամ, Խ.Գ.Թ. Վ.Բ.Յարամիշյանը: